ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 17.01.2025թ. ԹԻՎ 48-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

24 հունվարի 2025թ,
ժամը 15:30

Մասնակցում էին՝

<u>Հանձնաժողովի գնահատող անդամներ՝</u>

Անահիտ Հարությունյան — ՄՌԿևՎԿ ծառայության ՄՌ գլխավոր մասնագետ
Արսեն Կարապետյան — ՆևԴ ծառայության պետ

<u>Հանձնաժողովի բացող անդամներ՝</u>

Արամ Թունյան — ԻԿՀ բաժնի պետ
Գևորգ Հարությունյան — ԱՏԾ պետ

<u>Հանձնաժողովի քարտուղար՝</u>

Մարիամ Եսայան — ԳՀ բաժնի մասնագետ

Հանձնաժողովի անդամ Հ.Բաբայանը գտնվում էր անաշխատունակության արձակուրդում և նիստին չմասնակցեց:
Հանձնաժողովի նախագահի լիազորությունները ստանձնեց հանձնաժողովի գնահատող անդամ Ա.Կարապետյանը:

Հանձնաժողովի նախագահը «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-03/25» ծածկագրով ընթացակարգի նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ (ՀՀ դրամ)

Հ/հ	CPV	Անվանումը	Ընդհանուր գինը
1	66511120/2	Առողջության ապահովագրման ծառայություններ	33 894 000

Հրապարակվեցին հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները, հասցեները և էլեկտրոնային հասցեները:
«Լիգա Ինշուրենս» Ապահովագրական ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, info@liga.am
«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան,Ավետ Ավետիսյան 116/1 և 116/5, nairi@imnairi.am
«Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62շ., տարածք 93-93/1, info@regoinsurance.am

«ՀԱՆ-ԳՀԾՁԲ-03/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի: Էլեկտրոնային հայտերում հրավերով նախատեսված փաստաթղթերն առկա են:
Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներն են (մասնակիցներից ոչ մեկը ԱԱՀ վճարող չի հանդիսանում)՝

Հ/հ	Մասնակից	Գնային առաջարկ
1	«Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ	29 469 000 (քսանինը միլիոն չորս հարյուր վաթսունինը հազար)
2	«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ	31 020 000 (երեսունմեկ միլիոն քսան հազար)
3	«Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ	36 096 000 (երեսունվեց միլիոն իննսունվեց)

Հանձնաժողովի անդամները արձանագրեցին, որ «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ գնային առաջարկում առկա է թվերով և տառերով գրված գումարների անհամապատասխանություն: Ինչպես նաև արձանագրվեց, որ «Լիգա Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ գնային առաջարկը գերազանցում է այդ գնումն իրականացնելու համար «ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ կողմից նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ի կատարումն ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ստացված N 03/26-1/12074-2023 գրության, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոմամբ հաստատված կարգի 67-րդ կետով, «CLIEN-TREASURY ծրագրային համակարգի միջոցով ստուգել ընթացակարգի շրջանակներում «Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ և «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ կողմից հայտերով ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումները՝ դրանց իսկությունը հաստատելու նպատակով:

«CLIEN-TREASURY ծրագրային համակարգի միջոցով ստուգումը հաստատեց ընթացակարգի շրջանակներում «Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ և «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ կողմից հայտերով ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումների իսկությունը:

Հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

1. Ընտրված մասնակից ճանաչել «Ռեգո Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ:
2. Ընտրված մասնակցին օրենքով սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
3. Օրենքով սահմանված կարգով սույն որոշման մասին տեղեկացնել շահագրգիռ անձանց:

Անահիտ Հարությունյան

Արսեն Կարապետյան

Արամ Թունյան

Գևորգ Հարությունյան

Մարիամ Եսայան